

անկարելի պիտի ըլլար զիմանալ տեղ մը
ուր մինչ ինք եկեղեցիներ ու դպրոցներ
կը հիմնէր, ժողովուրդը պարբերաբար սու-
րի և կրակի կը մատնուէր ու կը զաղ-
թէր: Իր մահէն յառաջ միսիթարութիւնն
ունեցաւ բոլորելու ազատութեան առաջին
տարին:

Պատկառելի իր անստգիւտ վարքովը, իր

զիտութեամբը, իր արդիւնքներովը Գերա-
պայծառ Ճնտոյեան վայելչապէս կրնայ
հանգչիլ մեր պարթեւ հայրապետներու հո-
ղին մէջ: Իր հոգեկից եղբայրները, իր
քարեկամները, իր ամբողջ ժողովուրդը
անմոռաց պիտի պահեն իր անոննը և պի-
տի գովին իր յիշատակը օրհնութեամբ:

* * *

ՅԵՍԻՆ ՈՂԶՈՅՆ

Ա.Ռ. ԳԵՐԱՄ. ՆԵՐՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՃՆՏՈՑԵԱՆ

Ի դիմաց Մուրատ - Բափայելեամ Վարժարամի Աշակերտաց

Գնացէք բարեաւ, Գերապայծառ,
Գնացէք սիրուն մեր Հայաստան.
Պանդուխտ որդուցս իղձերն հազար՝
Զեզի հետ հոն ընկերանան:

Գնացէք սիրուն մեր Հայաստան
Գնացէք սըրբել արցունքներ բիւր
Հայ որբերուն չըւառական,
Տանելով մեր լացն ու համբոյր:

Պանդուխտ որդուցս իղձերն հազար
Տարէք Զեզ հետ զերդ ծիծեռնակ.
Քլլան անոնք մէկ մէկ բուրուառ
Խենկել անոնց սուրբ յիշատակ:

Զեզի հետ հոն ընկերանան
Մեր ամենքն ջերմ մաղթանքներ.
Զեզ կը սպասէ Վասպուրական
Գնացէք բարեաւ Վեհափառ Տէր:

Գնացէք սըրբել արցունքներ բիւր,
Զեզ կը սպասէ Մայր Հայաստան
Խղճ, տենչ, մաղթանք, աղօթք համբոյր
Զեզի հետ հոն ընկերանան:

Տարէք մեր էն ջերմ մաղթանքներ
Հայաստանի վըկաներուն,
Ըլլան մէկ մէկ կարմիր վարդեր
Անոնց կարմիր շիրիմներուն:

Տարէք ողջոյն Մ'եղբագետոյն
Եղեմարուղի այն ջըրերուն
Տարէք ողջոյն առ Մ'ասեաց սար,
Տարէք ողջոյն հազար հազար:

Վեհափառ Տէր, Երթայր բարեաւ.
Բաէք առ մեր Մայր Հայաստան,
Որ չըկըրէ յոյսը բընաւ,
Կու գայ և ժամն իր փըրկութեան:

Բւէք թէ քու որդիք պանդուխտ
Թէպէտ նըժեհ ու թափառիկ,
Բայց ամենքն ալ ըրած են ուխտ,
Բզեզ կըրկել Հայ Հայրենիք:

Երթայր բարեաւ, Գերապայծառ
Տալով մեզի Զեր օրհնութիւն
Մաղթենք բարի Զեզ ճանապարհ
Ուրախ օրեր, Երջանկութիւն: